Գ.

## Չ, ԽԱԼԵԱՂ

Խալեաղ ըստ քրդաց՝ կը նշանակէ անխնամ ձգուած կամ անմարդաբնակ դաշտ, որ Բագրեւանդայ արեւմտեան ծայրն Ալաշկերտի, Բասեանի և Խնուսի միջավայրն բարձր դիրք մի գրաւած է. նաև ի հարաւոյ մասնաւոր ինչ Մանազկերտի և Անդափի սահմաններն ունի։ Գարա-եազու, որ կայր Խնուսա և Խալեաղի միջավայրն, աւելի բարձր դիրք ունէր քան Խալեաղ։

Խալեաղ 8—9 ժամ երկարութիւն (յարեմուտս) և 4—5 ժամ լայնութիւն ունի (ի հարաւ)։

Ի հիւսիս յարեւելից սահմանակից է Չաթ լերանց, ուր մի երեսից Չաթ անուն ջուր մի կը բղխի, կը հոսի ի հարաւ յարեւելս, Ջեարկան գետ անուն առնելով դաշտի մէջ Շեաեան, ուստի Մուրատ կը հոսի, իսկ Չա-